ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Գոլոֆաևանային փողոց հա. 8[ա] հեռ. (0261) 23739; (0261) 20700

Ելք № ԴԴ30-Ե-4715/12 «29» 08 2012թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36

Ուղարկում եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի վճռի պատճենը՝ երկու թերթից:

03 09 2012
4475-12

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գործ № ԳԴ4/0208/02/12

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԸ՝

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎՈՐ Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ Զ. ԱԴԱՄՅԱՆԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ Ն. ՂԱԶԱՐՅԱՆԻ
Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐ Գ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ
Ն. ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 29-ին

Դռնբաց դատական նիստում քննության առնելով քաղաքացիական գործը ըստ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հայցի ընդդեմ Գևորգ Թովմասյանի և Նելսիկ Վարազդատի Խուդաբաշյանի (անձնագրի համարը՝ ԱԻ 0492776, տրվ. 27.03.2008թ. ՕՄԳԻ-ի կողմից)՝ հօգուտ ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱ կազմակերպության գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ Գեղարքունիքի մարզպետը 2012 թվականի մայիսի 29-ին հայց է ներկայացրել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Գևորգ Թովմասյանի և Նելսիկ Վարազդատի Խուդաբաշյանի՝ հօգուտ ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱ կազմակերպության գումարի բռնագանձման պահանջի մասին:

Հայցադիմումը ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Սևան քաղաքի նստավայր է ստացվել 2012 թվականի հունիսի 04-ին:

Դիմելով դատարան՝ հայցվորը հայտնել է, որ 2011 թվականի ապրիլի 29-ին ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱ կազմակերպությունը, գործելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության անունից՝ ի դեմս տնօրեն Վ. Վարդանյանի մի կողմից և ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ն. Պողոսյանի միջև կնքվել փոխառության թիվ 17 պայմանագիրը, համաձայն որի՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության 2011թ. գարնանացան գարու սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 330-Ն և 2011 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2011թ. գարնանացան գարու սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» թիվ 279-Ն որոշումների, փոխառուին է հանձնվել տեխնիկական բնութագրերով նախատեսված որակի գարնանացան գարու էլիտային սերմացու մարզի գյուղատնտեսական տնտեսություններում գարու վերարտադրություն կազմակերպելու նպատակով, տրված քանակությունը համարժեք 1:1 հարաբերակցությամբ՝ 1 կգ-ի համար 100 ՀՀ դրամ գումարը մինչև տարեվերջ վերադարձնելու պայմանով: Փոխառուի կողմից գարնանացան գարու էլիտային սերմացու ձեռք բերելուց հետո, այն մարզի գյուղատնտեսական տնտեսություններին հատկացնելու և վերարտադրություն կազմակերպելու նպատակով 2011 թվականի ապրիլի 29-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ն. Պողոսյանը փոխառության եռակողմ պայմանագիր է կնքել Ծովագյուղ համայնքի ղեկավար Գևորգ Թովմասյանի և նույն գյուղի բնակիչ Նելսիկ Վարազդատի Խուդաբաշյանի հետ, համաձայն որի՝ փոխատուն փոխառու Նելսիկ Խուդաբաշյանին է հանձնել տեխնիկական բնութագրերով նախատեսված որակի գարնանացան գարու էլիտային 8.350 կգ սերմացու՝ գարու վերարտադրություն կազմակերպելու նպատակով:

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հաստատել կողմերի միջև 2012 թվականի օգոստոսի 20-ին կնքված հաշտության համաձայնությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

20.08.12թ. *ք. Գավառ*

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի /ք. Սևան/ վարույթում գտնվող թիվ ԳԴ4/0208/02/12 քաղաքացիական գործի կողմերը՝ հայցվոր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, պատասխանողներ Ծովագյուղ համայնքի ղեկավար Գևորգ Թովմասյանը և նույն գյուղի բնակիչ Նելսիկ Վարազդատի Խուդաբաշյանը, կնքում են սույն հաշտության համաձայնագիրը. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հայցապահանջն ընդդեմ Ծովագյուղ համայնքի ղեկավար Գևորգ Թովմասյանի և նույն գյուղի բնակիչ Նելսիկ Խուդաբաշյանի, ութ հարյուր երեսունհինգ հազար ՀՀ դրամ հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի բռնագանձելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործի շրջանակում:

Համաձայնագրի կողմերը կնքում են սույն հաշտությունը հետևյալի մասին՝

1. *Գործով պատասխանողներս Գևորգ Թովմասյանս և Նելսիկ Խուդաբաշյանը պարտավորվում ենք համաձայն գործում առկա փոխառության պայմանագրի մինչև 2013թ. ապրիլ ամսվա 30-ը հօգուտ ՀՀ գյուղտնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի հ/հ 1930005627050300 վճարել ութ հարյուր երեսունհինգ հազար ՀՀ դրամ:*
2. *Նշված ժամանակաշրջանում պայմանագրով նախատեսված և համաձայն հաշտության համաձայնագրի պարտականությունները չկատարելու դեպքում վերը նշված գումարի բռնագանձումը կատարել ԴԱՀԿ ծառայության միջոցով:*
3. *Հաշտության համաձայնագիրը կազմված է չորս օրինակից՝ կողմերից յուրաքանչյուրին մեկական օրինակ և մեկ օրինակը ներկայացնել դատարանին վճռով ամրագրելու նպատակով:*

Հաշտության պայմանագրի կողմերը

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ	*Ծովագյուղ համայնքի ղեկավար*	*Ծովագյուղ համայնքի բնակիչ*
Ռ. Գրիգորյան	*Գ. Թովմասյան*	*ՍՆՆՆ. ԱԻ 0492776*
/ստորագրություն, կնիք/	*/ստորագրություն, կնիք/*	*Նելսիկ Խուդաբաշյան*
		/ստորագրություն/»:

2. Ըստ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հայցի ընդդեմ Գևորգ Թովմասյանի և Նելսիկ Վարազդատի Խուդաբաշյանի՝ հօգուտ ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱ կազմակերպության գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործի վարույթը կարճել:
3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
4. Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:
5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով պարտապանի հաշվին:
6. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկ ամսվա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՍԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ՀՀ ք.Սևան Նաիրյան 1-ին նրբ. շ.13 Հեռ. 0261 2 21 50

№ Ե-5200-05

„22" 07 2013թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ք. Գավառ, Գ. Լուսավորիչի 36

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԳՆ „ՍԵՐՄԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ„ ՊՈԱԿԻ
ՏՆՕՐԵՆԻՆ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա

ՊԱՏՃԵՆԸ՝ ՔԱՂ-ՑԻ ՆԵԼՍԻԿ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆԻՆ
Գեղարքունիքի մարզ գյուղ Ծովագյուղ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՔԱՂ-ՑԻ ԱՆԱՀԻՏ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆԻՆ
Գեղարքունիքի մարզ գյուղ Ծովագյուղ

Ուղարկվում է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ալեքսանդր Մնացականյանի կողմից կայացված պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը:
Առդիր՝ 1 թերթ

ԲԱԺՆԻ ՊԵՏ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Լ.ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

Կատ.Ակ. Մնացականյան /0261-2-21-50/
կ/վ 05-1079/13

Գեղարքունիքի մարզային
Մուտքագրված 4897-
28 08 13

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին

18.07.2013թ. *ք. Սևան*

ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան՝ Ալեքսանդր Մնացականյանս, ուսումնասիրելով 30.05.2013թ. հարուցված թիվ 05-1079/13 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.10.2012թ. տրված թիվ ԳԴ4/0208/02/12 կատարողական թերթի համաձայն պետք է Նելսիկ Վարազդատի Խուդաբաշյանից հօգուտ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի բռնագանձել 835000 դրամ գումար

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 66 և 67 հոդվածների համաձայն պարտապանից հօգուտ ԴԱՀԿ ծառայության պետք է բռնագանձել 41750 ՀՀ դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ Նելսիկ Խուդաբաշյանի անվամբ գրանցված է ամուսնության փաստ և անհրաժեշտություն է առաջանում արգելանք կիրառել Նելսիկ Խուդաբաշյանի կնոջ՝ Անահիտ Մարգարի Խուդաբաշյանին պատկանող գույքի վրա:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 և 44 հոդվածի 4-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արգելանք դնել պարտապան՝ Նելսիկ Խուդաբաշյանի կնոջ՝ Անահիտ Մարգարի Խուդաբաշյանին (Գեղարքունիքի մարզ գյուղ Ծովագյուղ) պատկանող շարժական և անշարժ գույքի վրա:

Նրան արգելել որևէ գործարք կատարել արգելադրված գույքի նկատմամբ:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել փարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ Հարկադիր կատարող
Արդարադատության կապիտան *Ալ. Մնացականյան*